Ա. Վ. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ, Պարույր Սևակ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, 446 էջ

Հրապարակի վրա է Ա. Արիստակեսյանի «Պարույր Սևակ» ծավալուն ուսումնասիրությունը։ Մենագրության խիստ խորհրդանշական 12 գլուխներում հեղինակը ներկայացնում է մեծ բանաստեղծի կյանքը՝ սկսած նրա տոհմի ծագումից ու իրեն ծննդից մինչև ողբերգական վախճանը։ Եվ այդ կենսագրական պարզ հենքի վրա Արիստակեսյանը վարպետորեն հյուսում է բանաստեղծի ստեղծագործական բարդ կյանքի բազմանիստ ու գունագեղ հյուսվածքը։ Բանաստեղծի կյանքի իրադարձությունների և ստեղծագործության վերլուծությունների վարպետ միահյուսումը հնարավորություն է տվել հեղինակին Պ. Սևակի ստեղծագործության շատ հատկանիշներ հիմնավորել ու մեկնաբանել նրա ու առհասարակ հասարակական կյանքի անցուդարձերի իրական հանգամանքներով։

Լինելով բանաստեղծի կրտսեր ընկերն ու ժամանակակիցը, մանկուց ականատեսն ու վկան նրա կյանքի ընթացքին ու ստեղծագործական ձևավորմանը, քաջատեղյակն ու հոգեկիցը Պ. Սևակի ստեղծագործական խմորումներին և հոգեբանական ելևէջներին, Ա. Արիստակեսյանը հրապարակ է հանել այնպիսի փաստեր ու փաստարկներ, որոնք ոչ մի արխիվային վավերագրում չեն արձանագրված։ Հատկապես Պ. Սևակի մանկության ու պատանեկության տարիների գյուղական կյանքի միջավայրը հեղինակը ներկայացրել է այնպիսի կենդանությամբ ու համոզչությամբ, փաստերի այնպիսի ճշմարիտ զգացողությամբ, որ բանաստեղծի խառնվածքին, նրա գյուղական-մանկական միջավայրին անծանոթ մեկը դժվար թե կարողանար նման հավաստիությամբ վերակենդանացնել նրա կյանքի այդ տարիների պատկերը։ Եվ չվավերագրված շատ փաստերի հրապարակումն ու կենդանի իմաստավորումն էլ կազմում են մենագրության կարևոր արժանիքներից մեկը։

Բայց Ա. Արիստակեսյանը չի բավարարվել սոսկ իր գիտցածով ու տպավորություններով. նա բարեխղճությամբ ու մանրակրկիտ պրպտել է բանաստեղծի թողած տպագիր ու անտիպ ողջ ժառանգությունը, հարուստ նամականին, բոլոր թռուցիկ կամ անավարտ գրառումները, անգամ բանաստեղծի կարդացած գրքերի լուսանցքային նշումները, որքան ներել է հնարավորությունը՝ բանաստեղծի ընկերներից ու բարեկամներից ձեռք է բերել Պ. Սևակի գրած նամակները, մանրամասնորեն ու քննախույզ հայացքով կարդացել Պ. Սևակի մասին հրապարակված հայերեն ու այլալեզու բոլոր հոդվածներն ու ուսումնասիրությունները և փաստագրական այդ կայուն հիմքի վրա հյուսել Պ. Սևակի ստեղծագործական ձևավորման, հասունացման ու բարդ վերընթացի ամբողջական ու ճշմարիտ պատկերը։

Մենագրության սկզբից մինչև վերջին էջը ընթերցողի առջև վերամարմնավորվում է ու ողջ հասակով կանգնում Պ. Սևակի ստեղծագործական կերպարը իր հարաշարժ ու կենդանի դիմագծերով, իր անհանգստություններով ու տառապանքներով, մեծ սերերով ու ատելություններով։ Պ. Սևակը մեծ տառապանքների բանաստեղծ էր. նրա տառապանքը բաղադրված էր թե՛ անձնական կյանքի ելևէջներից, թե՛ հարազատ ժողովրդի ու հասարակության, և թե՛ ընդհանրապես ողջ մարդկության ճակատագրին աղերսվող այնպիսի լուրջ ու արդիական խնդիրներից, որոնք չէին կարող չհուզել մարդու և ողջ մարդկության այսօրվա և վաղվա բախտով մտահոգվող մեծ անհատականություններին։ Պ. Սևակը ծննդականով թեպետ փոքր ազգից սերված, բայց անձնագրով՝ արդի աշխարհի մեծ քաղաքացիներից մեկը, դառնում է այսօրվա մարդու տառապանքների թարգմանն ու հաղորդիչը մարդու՝ իրեն և իր միջև, նրա անցյալի և ներկայի միջև, նրա ներկայի ու գալիքի միջև։ Եվ տարածական ու հոգեբանական այս լայնահուն ընդգրկման մեջ բանաստեղծի տառապանքի երգը միագիծ ու միապաղաղ չի ընթացել, այլ պարույրաձև, բազմաբարդ խաչուղիներով ու կեռմաններով՝ մխրճված արդի մարդու և աշխարհի տագնապաշունչ հեքի մեջ, միշտ սնուցվող ու նորոգվող մարդու և մարդկայինի, անձի և հասարակության, քաղաքացու և մարդկության ամենակենսունակ և ինքնաբուխ ակունքներից։ Բանաստեղծի տառապանքի երգը ընթացել է ոչ թե լուտ մխալով, այլ անհաշտ պայքարի բոցավառումով, լավի, գե-

դեցկի, բարու, արդարացիի հաստատումով, վատի, տգեղի, չարի ու անարդարի անողոք հերքումով, ոչ թե հոռետեսություն և հուսահատություն, այլ պայծառ լավատեսություն և անսահման հավատ, որի լավագույն առհավատչյան դարձավ բանաստեղծի կարապի երգը՝ «Եղիցի լույսը»։ Այս է շատ ընդհանուր գծերով Պ. Սևակի բանաստեղծական բուն դավանանքը, որն իր բազմանիստ հարստությամբ բացել է մենագրության հեղինակը, այն էլ առանց անհարկի մանրակրկիտ նկարագրությունների, վրձնի զորեղ հարվածներով՝ սոսկ էականի ու բնորոշի առաջադրմամբ ու շեշտմամբ։

Դիտական-գեղագիտական բարձր մակարդակով գրված մենագրության մեջ հեղինակի գրականագիտական տաղանդն առանձնապես փայլում է «Անլռելի զանգակատուն» պոեմի և Սևակի սիրո մեծ քնարերգության վերլուծություններում։ Թե՛ հիշյալ պոեմը և թե՛, մանավանդ, Սևակի սիրային քնարերգությունը մեր արդի բանաստեղծության այն խոշորագույն նվաճումներից են, առանց որոնց չի կարելի պատկերացնել և՛ բանաստեղծի պոեզիան, և՛ մեր այսօրվա բանաստեղծության մակարդակն ու որակն ընդհանրապես։ Ա. Արիստակեսյանը գեղագիտական բարձր ճաշակով և գրականագետի հմտությամբ քննում ու գնահատում է «Զանգակատան» դրա-պատմական արժեքն ու գեղարվեստական արժանիքները՝ սկսած պոեմի հորինման նախապատմությունից, վերջացրած նրա համանվագային-սիմֆոնիկ կառուցվածքի յուրահատկությունների սրամիտ բացահայտումներով։ Նույնքան նրբահայաց խորատեսությամբ են բացահայտված Պ. Սևակի սիրային քնարերգության բազմանիստ ու առինքնող ծալքերը։ Բանաստեղծի անձնապես ու վիթխարի խորությամբ գերզգայված մեծ սիրո տառապանքների գեղագիտական մեկնաբանությունների մեջ մենագրության հեղինակը բացահայտում է սիրո զգացումի անձնականից ընդհանրականին փոխակերպելու նրա բացառիկ վարպետությունը, որով Պ. Սևակը դառնում է մերօրյա մեծագույն սիրերգակներից մեկը, նոր մարդու (անկախ տարիքային սահմանափակումներից), սիրո անկեղծ, անմիջական, իմաստուն ու զգայական, առնական-քնարական անսահմանափակ շեշտերով հարուստ զգացումի արտահայտիչն ու թարգմանը։

Ա. Արիստակեսյանը Պ. Սևակի ստեղծագործության ընթացքն ու վերընթացը քննելիս միշտ և ամենուրեք նրա տարբեր առիթներով արտահայտած տեսական մտքերն ու մտորումները, դատողություններն ու դիտողությունները վարպետորեն միահյուսում է բանաստեղծի յուրաքանչյուր առանձին գրքի, քերթվածի, անգամ բանաստեղի վերլուծությանը, գեղարվեստական փաստը հիմնավորում բանաստեղծի տեսական համապատասխան դրույթով, դրանով իսկ սահմանում նրա գեղագիտական դավանանքի մեջ տեսականի և գործնականի նույնականության կուռ օրինաչափությունն։ Եթե քննության այդ եղանակով Արիստակեսյանը մի կողմից ապացուցում է բանաստեղծի գեղարվեստական փաստերի ոչ պատահական կամ տարընթաց լինելը, ապա մյուս կողմից ցուցահանում է գեղագիտական մտքի տեսական հարստությունն ու խորությունը։ Եվ բանաստեղծի տեսական ինքնատիպ մտքերի ու բանաստեղծական նույնքան յուրօրինակ փաստերի նույնականության մեջ մենագրության հեղինակը քայլ առ քայլ բացում է նորարարի այն վիթխարի առաքելական դերը, որ ստանձնեց և պատվով կատարեց մեր նորագույն բանաստեղծության մեջ Պարույր Սևակը։

Պ. Սևակի գրական մուտքի նախաքայլերում իսկ նկատվող բանաստեղծական ինքնատիպ մտածողության տարրերը, որ սկզբից ևթ իրենց վրա են գամում գրական հասարակության ուշադրությունը՝ հարուցելով վեճեր ու տարակարծություններ, գնալով՝ բանաստեղծությունից-բանաստեղծություն, ժողովածուից-ժողովածու ավելի են խորանում և, ի վերջո, վերածվում այն որակին, որ կոչվում է պարույրսևակյան ոճ և մտածողություն։ Իսկ այդ ոճն ու մտածողությունը ոչ թե մնում են ինքնակա ու ինքնապարփակ, դառնում սոսկ բանաստեղծի սեփականությունը, այլ սկսած 50-ական թվականների վերջերից և մանավանդ հաջորդ տասնամյակին, զորեղ ներգործում են մեր բանաստեղծական մտածողության վրա ընդհանրապես, արմատապես վերաշրջում այն և վերջնականորեն հաստատում բանաստեղծական այն նոր որակը, որով բնորոշվում է մեր օրերի հայ պոեզիան։ Ա. Արիստակեսյանը Պ. Սևակի ստեղծագործությունը քննելիս բացահայտում է բանաստեղծի նորարարական առաքելության բնաշրջությունը իր զարգացման կենդանի ընթացքի մեջ, իր սկզբնավորումով, վերելքներով ու վայրէջքներով։ Այդ քննություններից ընթերցողը գալիս է այն համոզման, որ Պ. Սևակի նորարարական միտումներն, անգամ նրա գրական սկզբնաքայլերի ժամանակ, ոչ թե սոսկ տարերային-ներզգայական ընկալումներ էին՝ վերածված բանաստեղծական փաստի, այլ նախապես տեսականորեն լուրջ հիմնավորված հեռանկարային ծրագիր։ Այդ են վկայում թեկուզ Հ. Ղազարյանին ուղղած 18-ամյա Պ. Սևակի հանրահայտ ծրագրային նամակն ու «Նաիրի Զարյանի պոեզիան Հայրենական պատերազմի ջեր-

«Ջանում» (1943 թ.) զեկուցումը, որոնց մեջ ջարադրված է պատանի բանաստեղծի գրական դավանանքը՝ նորարարական-տեսական լրջմիտ հիմնավորումներով։ Եվ ինչպես ամեն մի իսկական ու ճշմարիտ նորարարի ճանապարհը լի է զանազան խոչ ու խութերով, այնպես էլ Պ. Սևակի նորարարական ուղին ընթացել է համառ պայքարով, անընդմեջ արգելքների հաղթահարումով և բանաստեղծական սեփական ճաշակի աստիճանական հաստատումով։

Ա. Արիստակեսյանը պատմական ընթացքի մեջ քննելով Պ. Սևակի բանաստեղծական ինքնության աստիճանական զարգացումն ու վերջնական հաստատումը, անդրադառնում է նաև բանաստեղծի գրական յուրաքանչյուր քայլի շուրջը ծավալված վեճերին ու բացասական քննադատություններին և նրա ստեղծագործական առաջընթացի միտումների դիրքերից գիտական, զուսպ, կշռադատված քննադատությամբ ցուցահանում այդ բացասական կարծիքների սնանկությունը։

Պարույր Սևակը ոչ միայն մեծ բանաստեղծ էր, այլև նշանավոր գիտնական-բանասեր, կրքոտ հրապարակախոս ու քննադատ, գրական-հասարակական ակտիվ գործիչ։ Օժտված բնատուր վերլուծական մտքով, քաղաքացու ազնիվ կրքոտությամբ, համառ ու ջանադիր աշխատասիրությամբ, ասպիրանտական ուսումնառության բովով անցած ու մասնագիտացած հայոց հին դպրության պատմության մեջ, յուրացրած ազգային ու միջազգային բանասիրության նվաճումները, հասած բանասիրության դոկտորի գիտական աստիճանի՝ բանաստեղծը դրել է հայ հին գրական տարբեր դեմքերի ու երևույթների մասին փայլուն ուսումնասիրություններ, հայոց լեզվի, պատմության ու գրականության արդիական խնդիրներին նվիրված մեծարժեք հոդվածներ։

Ա. Արիստակեսյանն անդրադառնում է նաև Պ. Սևակի գիտական, հրապարակախոսական ժառանգությանը, ըստ արժանվույն գնահատում ու արժեքավորում է այն և, ամենակարևորը, ցույց է տալիս այն նորովի մոտեցումներն ու մեկնարանությունները, որ կատարում է բանասեր Պ. Սևակը ավանդական գրական դեմքերն ու երևույթները գնահատելիս, մեր լեզվի գրականության, պատմության արդիական խնդիրները քննելիս։

Այդ ամբողջ քննությունների ընթացքում քայլ առ քայլ ամրողջացնելով Պարույր Սևակի բանաստեղծական, գիտական ու քաղաքացիական դիմանկարը, Ա. Արիստակեսյանը միանգամայն արդարացիորեն չի մոռանում անդրադառնալ նաև մեր նոր բանաստեղծական լեզվի մեջ նրա խաղացած բարենորոգչական խոշոր դերին և բանաստեղծական լեզվամշակույթի այն անսպառ հարստությանը, որ իբրև անսասան ծանրակշիռ ավանդ իր պոեզիայով արդի գրական հայերենի գանձարանն է մեկընդմիշտ ներդրել մեծ բանաստեղծը։

Պարույր Սևակի մասին շատ են գրվել սեղմ կամ ընդարձակ, թեր կամ դեմ, հաստատող կամ հերքող հոդված-ուսումնասիրություններ, բայց մենագրական հետազոտության նա արժանանում է առաջին անգամ։ Առաջնությունը ոչ միայն ուսումնասիրության ձևի կամ ծավալի մեջ է, այլ բանաստեղծի ժառանգության ամբողջական ընդգրկման և ի մասնավորի՝ վերջինիս գնահատման ստույգ չափանիշի։ Ամենևին չկամենալով նսեմացնել մեր անվանի գրականագետների Պ. Սևակի այս կամ այն երկին, գրքին կամ ընդհանրապես նրա բանաստեղծական արվեստին տված ճշմարիտ գնահատականների գիտական արժեքը, հարկ է դիտել, որ մեծ բանաստեղծի կյանքը, գրական և գիտական ողջ ժառանգությունը ամբողջական և առարկայական ճշմարիտ գնահատականի առաջին անգամ արժանանում է Ա. Արիստակեսյանի կողմից, որը և մենագրության մեծագույն արժանիքն է։ Հարկավ Պ. Սևակն այն բանաստեղծն է, որի ստեղծագործության տարբեր կողմերը լուսաբանող շատ մենագրություններ կգրվեն դեռևս գալիքում։ Բայց այն, ինչ արել է Ա. Արիստակեսյանն այդքան սեղմ ժամկետում և այսօրվա մեր գրականագիտության ըմբռնումների ու նվաճումների սահմաններում, առավելագույնն է։

Ա. Արիստակեսյանի մենագրությունը Պ. Սևակի բանաստեղծական ու գիտական դիմանկարի ոչ թե սոսկ քարացած ու հաշվեկշռված ամփոփումն ու ամբողջացումն է, այլ մեծ բանաստեղծի ոգու կենդանի շարժման ընդհանրացումը, որը մեծ խոհեր ու խորհուրդներ է առաջացնում թե՛ մասնագետ գրականագետի և թե՛ լայն ընթերցողի մեջ առհասարակ։ Մենագրությունը գրված է պարզ ու անսեթևեթ լեզվով, կուռ տրամաբանությամբ, բանաստեղծի նկատմամբ տածած մեծագույն սիրով ու անկեղծ հարգանքով, բանաստեղծական ոգու ճշգրիտ զգացողությամբ, բայց երբեք էժան չափազանցումով ու անհարկի մեծարանքով։

Գիրքը թեպետ կարդացվում է գեղարվեստական հաճույքով, բայց գրված է գիտական բարձր ճաշակով ու մակարդակով։ Այն գրականագիտական լուրջ ուսումնասիրություն է և կարևոր ներդրում պարույրսեակագիտության և սովետահայ գրականագիտության մեջ առհասարակ։

Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր